և յաւել ծանուցանել նմա թէ չորք 'ի միաբանաց Երուսաղէմի՝ անկարգութիւն ինչ գործեալ աստ յեկեղեցւոջ՝ ժողովով արտաքսեցան 'ի մէնջ. եթէ այդր եկեսցեն նոքա՝ զգուշացիս 'ի նոցանէ։ Հասին չորս միաբանք 'ի Կոստանդինուպոլիս, չարախօսելով 'ի ճանապարհի զՄինաս վարդապետէ, և յանդիման եղեն Աւետիք վարդապետի, եւ 'ի հարցանել նորա զորպիսութենէ Մինաս վարդապետի եւ զմիաբանացն. նոքա՝ սկսան բաղում բանիւք ամբաստան լինել զնմանէ եւ ծանր ծանր երդմամբ հաստատէին՝ զոր խօսէինն. ասէ ցնոսա Աւետիք, զայդ ամենայն զոր ասէքդ, կարէ՞ք վկայել և հաստատել առաջի ժողովրդեան եւս, և նոքա ասեն՝ ոչ միայն առաջի ժողովրդեան՝ այլ և առաջի մեծի Արքայի եւս համարձակիմք ասել։ Եւ 'ի չարախօսել եւս ուխտաւորաց եկելոց յԵրուսաղէմէ, զոր լուեալ էին 'ի ճանապարհի 'ի չորից միաբանայ անտի, դրդուեցան ոմանք 'ի վարդապետաց, և բազումք 'ի Կեսարացի հիւսանց՝ ընկենուլ զՄինաս յաթոռոյ, և դնել 'ի տեղի նորա զՄատթէոս Կեսարացի՝ Սրէ՛ ասացեալ, ընկեցեալն 'ի Կաթուղիկոսութենէ Սսոյ։ Իբրեւ լուաւ զայս Աւետիք վարդապետ՝ գրեաց սաստ առ Մատթէոս գնալ 'ի տեղի իւր. եւ առեալ զչորեսին նախայիշեալ միաբանսն եւ զբազում վարդապետս եւ երիցունս, եւ նոքօք հանդերձ վերար 'ի գլուխ ամենեցուն՝ յատեան թագաւորին, և մատուցին թուղթ աղաչանաց՝ որ ունէր օրինակ զայս։

Մեք ամենեքին եկեղեցականք եւ գլխաւորք ազգին Հայոց, յայտ առնեմք զգոհունակութիւնս և զվստահութիւնս մեր, զոր ունիմք 'ի վերայ Աւետիք վարդապետի, որ այժմ Պատրիարք է 'ի Կոստանդինուպոլիս. զի նա գոլով հմուտ և տեղեակ ամենայն հանգամանաց օրինաց մերոց, կարէ հսկել և պահպանել զայն ըստ ժամանակին, և հաւատարմութեամբ բարւոք կատարել զօրէնս մեր, եւ պահել զամենայն ազգն Հայոց. չլինել երբէք հետեւող Լատին կրօնի, որոյ վասն խնդրեմք 'ի բարերար Արքայէդ չնորհել սմա ընդ Պատրիարքութեան Կոստանդինուպոլսոյ և զՊատրիարքութիւն Աթոռոյն Երուսաղէմի։ Եւ թագաւորն առաքեաց զնոսա առ Եպարքոսն. եւ նորա լուեալ